որպէս թէ ըստ մտաց դաշնագրոյն Օսմարայ, և զօրութեան հրովարտակաց Օսմանեան Կայսերաց՝ ժառանգութիւն սուրբ Երկրին և Ս. Տեղեաց աւանդեալ իցեն Ցունաց, և Հայք զկնի ժամանակաց եկեալ անդ՝ և վանք Ս. Յակոբայ լեալ իցէ 'ի բնէ Պատրիարքարան նոցին, եւ ինքեանք իբրեւ ողորմութիւն 'ի վարձու տուեալ իցեն նոցա. և թէ Հայք պատիր խաբէյութեամբ ստացեալ են զդիրսն, եւ նոքա եւս օրինակք եւ ոչ նախատիպք, և թէ ամենայն ազգք քրիստոնէից յԵրուսաղէմ՝ պարտին հնազանդիլ Պատրիարքին Ցունաց. և նախ նորա անկ է կատարել զօրէնս՝ և ապա այլոց, և այն եւս կամօք և հաճութեամբ նորին։ Ցայս գիր ձեռնարկեալ կնքեցին Պատրիարքունք Երուսաղէմի և Կոստանդինուպօլսի, և 18 երեւելի եպիսկոպոսունք՝ եւ աշխարհականք ոչ սակաւ։ Եւ խնդրէին իսկ զտանս 'ի Գլխաւորացն Հայոց գլխապարտ ածել 'ի Դուռն, որ և ըմբռնեցան ոգիք երկու, Սեղբոս և Մելիտոն Ամիրայք եւ եղան 'ի բանտի։ Ուր ուրեմն լու եղեւ յականջս ազգին պատրաստութիւնք և գործք Ցունաց, և սկսան դիմել այսր և անդր, այլ գտին զբարեկամս իբրեւ զթշնամիս՝ և զընտանիս իբրեւ զօտարացեալս, եւ չգտեալ 'ի նոցանէ օգնութիւն ինչ՝ մատուցին գիր աղաչանաց առ Եպարքոսն Կիւրճի Իսմայիլ Փաշա՝ քահանայիւք եւ խուռն բազմութեամբ ժողովրդոց՝ եւ խնդրեցին ատեան դատաստանի, զի երկու ազգաց հանդիսանալ յատենի Կայսեր և արդարացի քննութեամբ վճարել զիրսն, յայտնի կացուցանելով իւրաքանչիւր ոք զիրաւունս իւր։ Հաճեցաւ ընդ այս Եպարքոսն՝ և սահմանեցաւ օր. Հայք գնացին 'ի Դուռն՝ յորում ժամադիր լեալ էին, այլ լուան պատասխանի՝ թէ այսօր չլինի, գնացէք 'ի տեղիս ձեր, մինչեւ ազդ արասցուք ձեզ։ Բանզի Ցոյնք խոյս տուեալ ասին՝ ոչ կամէին հրապարակաւ 'ի դատ մտանել, այլ հնարիւք եւ բռնութեամբ տիրել այլոց իրաւանց, որոյ վասն լուեցուցին ըզդատաւորսն առ ժամանակ մի՝ ձեռնարկել յայլ իմն խորհուրդ ըստ սադրելոյ Եպարքոսին։

Ապա անցանել աւուրց ինչ՝ Պատրիարքունք Ցունաց նզովիւք պատուիրեցին ժողովրդոց յամենայն եկեղեցիս մայրաքաղաքին երթալ տալ գիր աղաչանաց առ Թագա-